Վլադիմիր Բարխուդարեան, *Ուրուագիծ Միջնադարեան, Հայկական Մշակոյթի Պատմութեան X-XIV դդ.*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2016, 231 էջ:

Պատմութիւնն անգնահատելի հնարաւորութիւն է տալիս վերհանելու մարդկային հասարակութեան քաղաքակրթական նուաճումների, յաջողութիւնների գաղտնիքները, հասկանալ դրանց նպաստող գործօնները, արուած ու չարուած քայլերը, որոնք ինչպէս մեծ համակարգերին, այնպէս էլ իւրաքանչիւր անհատի մշակութային եւ աշխարհայեացքային մեծ լիցքեր ու փորձառութիւն են ապահովում մեծ ապագայ կառուցելու համար:

Անզէն աչքով իսկ նկատելի է, որ թէ՛ համաշխարհային պատմութեան, եւ թէ՛ հայոց պատմութեան տարբեր փուլերում պարբերաբար գրանցուել են աննախադէպ առաջընթացներ, որոնք, անշուշտ, ունեցել են իրենց օրինաչափ հիմքերն ու նախադրեալները: Եւրոպայում արդէն ԺԴ. դարի կէսերից ակնյայտ է դառնում մարդկութեան պատմութեան մեծագոյն շրջափուլը՝ մարդակենտրոն աշխարհայեացքի հիմքով զարգացող Վերածնունդը, որի քաղաքակրթական ուժականութիւնը մինչ այժմ էլ ուղեկցում է մարդկային հասարակութեանը:

Որո՞նք էին այդ մեծ շարժումների նախադրեալները, պատմական ինչպի՞սի իրադարձութիւններ եւ գործընթացներ յանգեցրին մարդակենտրոն աշխարհայեացքի արմատաւորմանը մարդու հոգեկերտուածքում: Սրանք կարեւորագոյն նշանակութեան մարտահրաւէրային հարցադրումներ են ժամանակակից մարդու առջեւ՝ նոր ժամանակներում կողմնորոշուելու եւ քաղաքակրթական ընտրութիւն կատարելու գործում:

Հայոց պատմութեան եւ համաշխարհային պատմութեան գիտական պարբերացումները միմեանց հետ համադրելով՝ ակնյայտ է դառնում դրանց միջեւ զարգացումների քաղաքակրթական համահունչ քայլերթի առկայութիւնը: Թէ՛ վաղ միջնադարում, թէ՛ զարգացած միջնադարում հայ իրականութիւնն ապրեց մէկը միւսին յաջորդած մշակութային երկու զարթօնքները՝ այսպէս կոչուած Ոսկէ եւ Արծաթէ դարերը:

Ժ.-ԺԴ. դարերի ժամանակաշրջանը կամ զարգացած միջնադարը, ինչպէս Եւրոպայում, այնպէս էլ Հայաստանում աւատատիրութեան բուռն զարգացման գագաթնակէտն էր, որի ակունքներում կանգնած էին ոչ միայն ընկերային-հասարակական ու տնտեսական փոխակերպումները, այլեւ մշակութային նոր որակի իրականութիւնը: Այստեղ աստիճանաբար աւելի ակնյայտ էին դառնում մարդակենտրոն աշխարհայեացքի տարաբնոյթ արտայայտութիւններ:

Հազարամեակներով ապրելով Արեւելքի ու Արեւմուտքի սերտ շփման սահմանում, տնտեսական ու մշակութային խաչմերուկներում՝ հայ

իրականութեան առջեւ մշտապէս խնդիր է եղել արեւելեան ու արեւմտեան բազմաշերտ մշակոյթների համադրումն ազգայինի հետ, որոնց միահիւսումից էլ ստեղծուել են նորանոր արժէքներ: Այս առումով հայկական ժամանակակից պատմագիտութեան գերխնդիրներից է դառնում հայ իրականութեան մէջ մարդակենտրոն աշխարհայեացքի ձեւաւորման ակունքների, զարգացման ընթացքի խոր ուսումնասիրութիւնը, որը հնարաւորութիւն կը տայ բազմակողմանի գնահատականներ տալու ոչ միայն մշակոյթի, այլեւ քաղաքական ու տնտեսական պատմութեան տարաբնոյթ խնդիրներին:

Անուանի միջնադարագէտ Վլադիմիր Բարխուդարեանի *Ուրուագիծ Միջնադարեան Հայկական Մշակոյթի Պատմութեան X-XIV դդ.* աշխատութիւնն արժէքաւոր ներդրում է այս գործում:

Բազմակողմանի արժէքաւոր տեղեկութիւններով լի այս ամփոփ աշխատութիւնը յատկապէս ակնառու է իր կուռ բովանդակութեամբ, թեմաների՝ տրամաբանական շղթայ ձեւաւորող յաջորդականութեամբ, որի արդիւնքում խնդրոյ առարկայ թեման արտայայտւում է պատմական իր ամբողջական պատկերով: Անհերքելի է, որ եւրոպական Վերածնունդը հասունացրեցին աշխարհաքաղաքական, գաղափարական վայրիվերումներն ու խմորումները, որոնք տեղի էին ունենում մինչեւ այդ՝ խաչակրաց արշաւանքները, Արեւելք-Արեւմուտք բազմակողմանի շփումների աշխուժացումը եւն.: Բնականաբար, Հայաստանն ու հայերն անմասն չէին այդ բոլոր գործընթացներից: Աւելին, հայ իրականութիւնը ինչպէս Մեծ Հայքում, այնպէս էլ Կիլիկեան Հայաստանում ամբողջովին ընդգրկուել էին պատմական նշանակութեան այդ խորքային գործընթացներին: Ուստի պատահական չէ, որ սոյն աշխատութեան ներածական մասում հեղինակը բաւական հանգամանօրէն անդրադարձել է հայոց պատմութեան զարգացած միջնադարի փուլում տեղի ունեցած քաղաքական ու տնտեսական տարաբնոյթ գործընթացներին:

Առաջաբանից զատ, մենագրութիւնը կազմուած է երեք բաժիններից, եզրափակումից, տեղանունների ու անձնանունների ցանկից:

Առաջին բաժինը նուիրուած է միջնադարեան հայ բանասիրութեանը, որտեղ յատուկ արժեւորուած է *Սասնայ Ծռերը*՝ անդրադառնալով դիւցազնավէպի ծագման ակունքներին, դրանում կուտակուած հայկականութեան բնոյթին եւ միջնադարեան իրականութեան մէջ դրա փոխակերպումներին: Նկատի են առնուել նաեւ *Սասնայ Ծռերի*ն անդրադարձած այլ հեղինակների մօտեցումներն ու աշխատութիւնները: Հետաքրքրական են յատկապէս հայոց դիւցազներգութեան եւ այլ ժողովուրդների միջնադարեան դիւցազնավէպերի ու ասքերի միջեւ տարուած համեմատականներն ու զուգահեռները, որոնք ուղղակի, թէ անուղղակիօրէն շօշափում ու բացայայտում են մարդակենտրոն աշխարհայեացքի՝ տակաւ հասունացող միտումների ընթացքը:

Մասնաւորապէս, ներկայացնելով Յովհաննէս Թումանեանի այն միտքը, որ ժողովրդական վիպերգութիւնները, որքան էլ ազգային լինեն, համամարդկային շատ գծեր ունեն, Բարխուդարեանը *Սասնայ Ծռեր*ում վերհանում է ազատութեան, ժողովուրդների համերաշխութեան, խաղաղութեան գաղափարներն ակնյայտ շօշափող բազմաթիւ հատուածներ:

Գրականութեանը նուիրուած ենթաբաժնում յատուկ արժեւորուած է բոլոր ժամանակների հայ գրականութեան ականաւոր ներկայացուցիչ Գրիգոր Նարեկացին իր *Մատեան Ողբերգութեան* երկով: Առանցքային շեշտադրումների միջոցով, հեղինակին յաջողուել է հանգամանօրէն ներկայացնել Նարեկացու ապրած ժամանակների, միջավայրի բնոյթը, միտումները, ինչպէս նաեւ տարբեր ուսումնասիրողների կողմից մինչ այժմ եղած մօտեցումների համադրութիւնը: Այսպէս՝ ընթերցողը հնարաւորութիւն է ստանում համակողմանիօրէն ծանօթանալ Նարեկացուն՝ որպէս ոչ միայն հայ գրականութեան, այլեւ փիլիսոփայական մտքի ականաւոր ներկայացուցչի:

Գրքում ըստ արժանւոյն ներկայացուած է Արծաթէ Դարի գրականութեան եւ փիլիսոփայական մտքի գունապնակը՝ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին, Ներսէս Լամբրոնացին, Գրիգոր Տղան, Ներսէս Շնորհալին, Մխիթար Գօշը, Վարդան Այգեկցին, Յովհաննէս Պլուզը, Յովհաննէս Թլկուրանցին եւն.: Իրենց ստեղծագործութիւններում նրանք արտայայտել են նաեւ ժամանակի փիլիսոփայական մտքի միտումները, մտածողութեան զարգացումները, որոնց միջոցով պատկերւում են միջնադարեան հայ իրականութիւնում տիրող աշխարհայեացքի բնոյթը եւ մտայնութիւնները: Հեղինակը յատուկ շեշտադրումներով անդրադարձել է նաեւ միջնադարեան հայ փիլիսոփայական մտքի, կրթութեան եւ գիտութեան ականաւոր ներկայացուցիչներին՝ Յովհաննէս Իմաստասէր, Խոսրով Անձեւացի, Դաւիթ Քոբայրեցի, Ներսէս Մշեցի, Եսայի Նչեցի, Յովհան Որոտնեցի, Յովհաննէս Ծործորեցի եւն.: Ինչպէս բուն Հայաստանի, այնպէս էլ Կիլիկեան Հայաստանի խոշոր քաղաքներում հաստատուել էր դպրոցների եւ համալսարանների մի ամբողջ ցանց, որն իր ժամանակի նորարարական համաշխարհային բարձրագոյն մակարդակի օրինակներից է, իսկ Գրիգոր Տաթեւացու գործունէութիւնը՝ կրթական-գիտական իրողութեան գագաթնակէտերից է:

Առանձնայատուկ է պատմագրութեան դերը միջնադարեան հայ մշակութային-գիտական ժառանգութեան ամբողջական պատկերում: Պատմիչների այս շքերթի ներկայացուցիչները՝ Յովհաննէս Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարօնեցին (Ասողիկ), Արիստակէս Լաստիվերտցին, Մատթէոս Ուռհայեցին, Սամուէլ Անեցին, Մխիթար Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արեւելցին,

Ստեփանոս Օրբէլեանը, Հեթում Պատմիչը, Գրիգոր Ակներցին եւ այլք, ինչպէս իրաւացիօրէն նշում է հեղինակը, իրենց աշխատութիւններում անդրադարձել են ոչ միայն բացառապէս հայոց պատմութեանը, այլեւ արժէքաւոր տեղեկութիւններ են հաղորդում համաշխարհային պատմութեան ուսումնասիրութեան համար բացառիկ նշանակութիւն ունեցող տարաբնոյթ իրադարձութիւնների մասին:

Միջնադարեան իրաւունքի մեծագոյն ներկայացուցիչներից էր Գօշը, որի *Դատաստանագիրք*ը գործածուել է ոչ միայն միջնադարում, այլեւ լայնօրէն՝ աշխարհում սփռուած հայկական բազմաթիւ գաղթօճախներում: Հեղինակը յատուկ, կարեւոր շեշտադրումներով արժեւորել է նաեւ ԺԳ. դարի պետական-հասարակական ականաւոր գործիչ, պատմիչ եւ իրաւագէտ Սմբատ Սպարապետի *Դատաստանագիրք*ը:

Միջնադարեան հայ փիլիսոփայական միտքը եւ բնական գիտութիւնները, ի դէմս Գրիգոր Մագիստրոսի, Յովհաննէս Իմաստասէրի, Վահրամ Ռաբունու, Յովհան Որոտնեցու եւ այլոց՝ Բարխուդարեանը ներկայացրել է ժամանակի փիլիսոփայութեան, գիտական՝ հայկական եւ համաշխարհային առաջադէմ զարգացումների ու զուգորդումների ենթահողում: Առանձնայատուկ ուշադրութեան են արժանացել բժշկագիտութեան միջնադարեան հայկական նուաճումները՝ Ամիրդովլաթը, Գրիգորիսը, Մխիթար Հերացին եւ այլք:

Հայկական մշակութային վերածննդի համայնապատկերում հայ իրականութիւնը նուաճեց համաշխարհային մշակոյթի հնարաւոր բարձունքները: Միջնադարեան հայ երգարուեստն ու կերպարուեստը դարձան հայ պատմամշակութային ժառանգութեան գանձարանները, որոնք համամարդկային են եւ, իվերջոյ, մենագրութեան հեղինակի խօսքով ասած, դուրս են գալիս հայ իրականութեան սահմաններից դառնալով համաքրիստոնէական մեծագոյն արժէքներ:

Համաշխարհային բացառիկ նշանակութիւն ունի միջնադարեան հայկական կերպարուեստը, որտեղ առանցքային է մանրանկարչութեան դերը: Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի եւ այլոց մանրանկարներով ստեղծուած աւետարանները ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային արուեստի բացառիկ նմուշներ են: Մենագրութիւնում ընդհանուր ներկայացուած են միջնադարեան հայ մանրանկարչութեան հիմնական դպրոցները, որոնց գրչակենտրոնների թիւը հաշւում էր տասնեակներով:

Հեղինակը իւրովի է ներկայացնում միջնադարեան հայ ճարտարապետութեան նուաճումները՝ դիտարկելով այն ոչ միայն որպէս առանձին ժամանակաշրջանի բացառիկ երեւոյթ, այլեւ ամբողջ հայ ճարտարապետութեան պատմական զարգացման ընթացքի գագաթնակէտային փուլ, որը չսահմանափակուեց հայ իրականութեան մէջ, այլ որոշակի ազդակներ հաղորդեց համաշխարհային ճարտարապետական արուեստի միտումներին եւ զարգացումներին:

Դրանում յատկապէս առանձնանում են եկեղեցաշինութիւնն ու խաչքարային արուեստը: Մենագրութեան մէջ առանձնայատուկ տեղ է գրաւում միջնադարի ականաւոր հայ ճարտարապետ Մոմիկը, որի ստեղծագործութիւնները համամարդկային մշակոյթի ժառանգութեան մաս են կազմում:

Միջազգային առեւտրի ու տնտեսութեան բուռն զարգացման հետ բուն Հայաստանում եւ Կիլիկեան Հայաստանում ծաղկում են կիրառական արուեստի զանազան ճիւղերը, որոնց սոյն մենագրութեան մէջ առանձին մաս է նուիրուած: Կիրառական արուեստի հայկական բացառիկ նմուշները մեծ համբաւ են ունեցել ժամանակի համաշխարհային ապրանքաշրջանառութեան մէջ, որոնցից հեղինակը յատկապէս յիշատակում է փայտագործութիւնը, ոսկերչութիւնը:

Յատկանշական է մենագրութեան եզրափակման մասում հեղինակի կատարած բաւական խորը համադրումը *մշակութային վերածնութիւն* հասկացութեան եւ երեւոյթի շուրջ, որտեղ տեղ են գտել տարբեր ժամանակների գիտնականների տարաբնոյթ տեսակէտեր: Բարխուդարեանը յատուկ շեշտում է այն իրողութիւնը, որ հայ իրականութեան մէջ Ժ.-ԺԴ. դարերի ընթացքում տիրող մտայնութիւններում, փիլիսոփայութեան, գիտական իմացաբանութեան մէջ նկատելի էր հայեացք դէպի մարդը, բնութիւնը: Սակայն, ինչպէս հեղինակն է նշում, հարկ է տուրք չտալ օտարազգի եւ հայ տարբեր հեղինակների (յատկապէս ԽՍՀՄ պատմագիտութեան) մօտեցումներին, որոնցում վերածնութիւնը կարծես թէ շեղւում է իր իրական սահմանումներից եւ ստանում այլ բնորոշումներ: Ուստի, այս առումով, համաձայն ենք Բարխուդարեանի այն տեսակէտին, որ վերածնութեան գաղափարը կարելի է կապել միմիայն Եւրոպայի եւ մասնաւորապէս Իտալիայի հետ: Վերյիշեցնենք, որ եւրոպական վերածնունդն, իր ողջ էութեամբ, սահմանւում է մարդակենտրոն աշխարհայեացքի տիրապետմամբ եւ զարգացմամբ, որի ցուցիչները սկսեցին աւելի ցայտուն արտայայտուել միայն ԺԳ. դարում, յատկապէս իտալական գրականութեան մեծ եռեակի՝ Դանթէ-Պետրարկա-Բոկաչչոյի ստեղծագործութիւններում: Եւ եթէ այս զարգացումները եւրոպական իրականութեան մէջ պարարտ հող գտան յետագայում փոխակերպուելու եւ անցում կատարելու աշխարհայեացքային նոր յայտնի միջավայրեր (լուսաւորութիւն եւն.), ապա հայ իրականութեան մէջ, ըստ ամենայնի, աշխարհաքաղաքական խիստ անբարենպաստ պայմաններից ելնելով՝ նման զարգացումներ չիրականացան իրենց բնականոն հունով: Աւելին, հայութեան մշակութային ողջ զարկերակը արդէն ԺԵ.-ԺԹ. դարերի ընթացքում - երբ եւրոպական վերածնունդը բուռն զարգացման գագաթնակէտին էր - մեծ մասամբ կենտրոնացաւ ամբողջ աշխարհում սփռուած հայկական գաղթօճախներում:

Բարխուդարեանի *Ուրուագիծ Միջնադարեան Հայկական Մշակոյթի Պատմութեան X-XIV դդ.* աշխատութիւնը ընդհանուր համապատկերի է բերում հայ մշակոյթի զարգացման բացառիկ մի ժամանակափուլ, որին անուանում են հայկական մշակութային երկրորդ վերածնունդ: Ընդ որում հեղինակին յաջողուել է պահպանել դրան նախորդած եւ յաջորդած ժամանակաշրջանների հետ տրամաբանական կապն ու զարգացումների ընթացքը: Յատկապէս ուշագրաւ է հայ եւ համաշխարհային մշակութային զարգացումների միջեւ մենագրութեան ամբողջ ընթացքում անընդհատ շեշտադրուող կապն ու համադրումները, ինչն, անկասկած, հիմնաւոր քայլ է լուծելու պատմագիտական բազմաթիւ կարեւոր այնպիսի խնդիրներ ինչպէս, օրինակ, հայոց պատմութեան պարբերացման խնդիրը: Մենագրութեան մէկ այլ կարեւորագոյն դրական կողմը բազմակողմանի կիրառութիւնն է պատմաբանների, արուեստագէտների, փիլիսոփաների, կրթութեան եւ հասարակութեան տարաբնոյթ այլ բնագաւառների մասնագէտների համար:

ՋՕՀՐԱՊ ԳԷՈՐԳԵԱՆ
barevzor@gmail.com